



ՏՆՕՐԻՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 22

ՀԱՐԱՐ

26 ՅՈՒՆԿԱՐ 1908

ԱՊՐԱՅՍՏՈՂՈՐ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՐԱՅՍՏՈՂՈՐ ԵՄԻՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գրառու, Օռոգյալ-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փաթա

(آ. آصاوریان) شرکت صنیعہ مطبعہ — باب عالی جاده سنده نوسو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտոն-Ալի հաստատութիւն 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
Վրացական մեքենաներ
կը գտնուին

Մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան լաճառատանց մէջ :

ՇԱՐՔԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

- | | |
|--------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

[Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր զաւառներու քոյր փաղսկներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլի տունը :



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆ

Թերթ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. զաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաւ փաւա : ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խորնաձայլ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՄԼՈՒ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար : Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւ այլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւ այլն :

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագիրն շարունակէ ուղղել Տէր և Տնօրէն Դարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճաւաթխի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը :





ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 22

ՇԱՐԱԹ

26 ՅՈՒՆՎԱՐ 1908

ՀԻՆ ԷՋԵՐ

Տ Ա Ն Ը Մ Է Ձ

Գրեց՝ Յ. Յ. ՊԱՐՈՆՅԱՆ

Տիկնա՛յք,
Կուզե՛ք քիչ մը կռուիլ ձեր ամուսիննե-
րուն հետ:

Շատ կը սիրեմ հանդիսատես ըլլալ էրիկ
կնկան կռիւներուն՝ որք հաշտութեամբ կը
վերջանան:

Հաշտութիւնն ապառնի ամուսնական
կռուոյ մը նախադուռն:

Կռուեցէ՛ք քիչ մը, կը խնդրեմ, բայց ո՛չ
հագուստի, ուտեստի, պտոյտի, զրօսանաց
կամ ասոնց նման չնչին խնդրոց համար, այլ
առարկայի մը համար՝ որոյ կէսը ձեզի պատ-
կանի և կէսը ձեր ամուսիններուն: Կռուե-
ցէ՛ք ձեր սիրոյ և ամուսնութեան պողոտն
վրայ:

Հայկանոյշը չորս տարեկան է: Ճերմակ
և կտրիկ դէմքով, պզտիկ բերնով, փոքրիկ
քիթով, կապոյտ աչերով, խաբոտեալ մազե-
րով, գեղեցիկ և գրաւիչ աղջիկ մ'է: Շատ

կրակոտ է սակայն, վայրկեան մը չկրնար
հանդարտ մնալ: Տունի դպրոց կերթայ, ուր
կը վազէ և կը խաղայ պարտէզին մէջ մինչեւ
որ հոգնի և դէպ ի երեկոյ պառկի քնոնալ:
Քիչ մը: Ամէն առաւօտ միտ աղմուկ կը յա-
րուցանէ տան մէջ երբ մայրն ուզէ սանտրել
անոր մազերը:

Առաւօտ է: Մայրը՝ նստած պատուհանին
առջեւ, առջեւը դրած ձերմակ լաթ մը՝ զոր
Հայկանոյշին ծոծրակն ի վար պիտի դնէ ա-
նոր մազերը սանտրած միջոցին՝ սանտր ի ձե-
ռին կապասէ Հայկանոյշին որ դայ և առջեւը
նստի: Հայկանոյշ, որ դեռ հագուած ալ չէ,
կը փախչի: Մայրը կը կանչէ աղջիկըն: Հայ-
կանոյշ խնդալով սենեակին անկիւնը կը
փախչի:

— Եկուր սիրուն աղջիկս, հրեշտակս կը-
սէ, մայրը խանդաղատանօք:

Հայկանոյշ միւս անկիւնը կը փախչի և

ձեւերով վեր կառնէ մազերը որ ճակտին վրայ ինկած էին:

— Մի՛ հոգնեցներ ինծի, Հայկանոյշ, եկուր կրսեմ կոր:

— Ձէ մայրիկ չէ, կը պատասխանէ խրնդալով և աչքին վրայ ինկած մազի քանի մը թելերը ձեւքով դէպ ի վեր քշելով:

— Հիմա ելլեմ պիտի բռնեմ հա:

Հայկանոյշ սենեակէն դուրս կը փախչի:

— Եկուր, հրեշտակս եկուր, մի՛ հոգնեցներ ինծի:

Հայկանոյշ ուրիշ սենեակի մը մէջ կը պահուրտի:

— Եկուր կրսեմ կոր, մի՛ սկսիր նորէն, գործի պիտի ելլամ, սպասելու ժամանակ չունիմ:

Պատասխան չկայ:

— Սիրտս հատաւ նէ՛ ... եկուր կրսեմ կոր, հիմա կեցելեմ կը ծեծեմ հա՛:

Հայկանոյշ մօրը կերեւայ սենեակին սեմին վրայ և խնդալով նորէն կը փախչի:

— Ինծի հետ խաղի՛ ելեր ես հէ՛ ... կեցիր ես հիմայ կը սորվեցնեմ քեզի ... սատանայ ... սըւոր նայէ մէյ մը ... ինծի հետ ճուրճինայի ելեր է:

Մայրը կեցէ և Հայկանոյշին թեւէն բռնելով կը բերէ առջեւը կը նստեցնէ բազմոցին վրայ:

— Նստէ՛ նայիմ, հոս: Սա լաթը դնեմ: Պզտիկը կը քաշէ լաթը:

— Հայկանոյշ, կը ծեծեմ հա:

Մայրը կը յաջողի լաթը դնել: Պիտի սկսի սանտրել: Սանտրը ո՛ւր է: Քովի սենեակը ձգած էր աղջիկը բերելու գացած ժամանակը:

— Ասանկ նստէ՛, մի՛ երեւար, որ սանտրը գտնեմ:

Սիրուն սատանան լաթը նորէն կը քաշէ, մէկդի կը նստէ և կսկսի սենեակին մէջ վազել:

— Դարձեա՛ւ ելար ... հոս եկու նայիմ ...:

Մայրը բռնելու կաշխատի աղջիկը որ վազած ժամանակ ոտքը դրան սեմին կը դըպի, կիյնայ և ծունկը կը ցաւցնէ քիչ մը:

— Օ՛խ ըլլայ, օ՛խ ըլլայ ... եկուր կրսեմ կոր քեզի երկու ժամէ ի վեր:

Հայկանոյշ բարձր ձայնով կսկսի լալ:

Ի՛նչ կայ, ի՛նչ եղաւ, աղջիկս ինչո՛ւ

կուլայ կոր, կը պօռայ հայրը որ վարի յարկէն աղջկանը լալիւնը լսած ու վազելով իջած էր:

— Բան մ'ալ չկայ, մի՛ բըզկուիր ... եկուր կրսեմ չգար:

— Ի՛նչ եղաւ:

— Հասայ նէ՛ ...

— Ինչո՞ւ կուլայ կոր ...

— Մաշեցայ նէ ... մեռայ նէ ...

— Ի՛նչ ըրիք խեղճին որ ասանկ կուլայ կոր:

— Ո՞վ ինչ պիտի ընէ ճանրմ ... չգար որ սանտրեմ, ամէն առտու է այս ... քաշուելու բան չէ ...

— Ասո՞ր համար կուլայ կոր:

— Չգար որ սանտրեմ, կը փախչի, բըռնեմ ըսի, ան ալ չընուելու համար վազեց ինկաւ ... աս է եղածը ... մի՛ վախնար ... չղարկինք ... օ՛խ ըլլայ որ սորվի ...

— Հիմայ աս օխը վայլեց:

— Վայլեց, դուն երես կուտաս կոր ան ալ ասանկ չփացած կըլլայ կոր:

— Քանի մ'անգամներ ըսինք ձեզի որ տղայոց ջուրին երթալու է քիչ մ'ալ:

— Քանի մը անգամներ մենք ալ ըսինք ձեզի որ տղայոց ջուրին երթալու չէ, որովհետեւ տղայք չփացած կըլլան երբ տեսնեն որ իրենց ջուրին կերթան:

Հայկանոյշ, երեսի վրայ դեպիւնը պառկած կուլայ մեծ լալիւնով:

— Ասանկ մայրութիւն չըլլար:

— Ասանկ հայրութիւն չըլլար:

— Վա՛խ, աղջիկս, վա՛խ ...

— Քիչ մը լաց կուզես նէ:

— Վա՛խ, ետվրում, վա՛խ ...

— Որչափ ալ փափուկ սիրտ ունիս:

— Եկո՛ւր, աղջիկս, եկո՛ւր քեզի շաքար առնեմ:

— Ասոր համար է որ մեզի չսեպեր ա՛:

— Խեղճ աղջիկ: Կեռաս առնեմ քեզի աղջիկս ...

— Ս՛ու կը հեկեկայ Հայկանոյշ, գլուխը քիչ մը վերցնելով:

— Մարդ Աստուծոյ, քիչ մը ցուցուր ինքզինքդ, քանի մը հատ զարկ ... որ վախնայ: Երես կուտաս կոր, վերջը մեզի կը բարկանաս կոր:

— Անիկայ պղտիկ է տակաւին :

— Սանկ չպօռամ քիչ մը :

— Ի՞նչ պօռամ . . .

— Բարկացի՛ր քիչ մը :

Այրը չպատասխանեց : Վեր կեւնէ, բայց քանի մը վայրկեան յետոյ նորէն վար կիջնայ լռեցնելու համար Հայկանոյնը որ կուշար դեռ : Դրան սեմին վրայ կը կայնի և բարձր ձայնով,

— Հա՛յկանոյն . . . Հայկա՛նոյն . . . Հայկա՛նոյն . . . հը՛ճճ . . . անպամ քեզի . . . հա՛աա . . . հոս եկուր . . . քեզի կըսեմ կոր . . . մօրդ ձեռքը պա՛գ նայիմ . . . երեսս կը նայիս կոր . . . հիմա կը ծեծեմ հա՛ . . . գետնէ գետին կը զարնեմ հա՛ . . . :

Հայկանոյն դանդաղաշարժ կը փորձէ նըստիլ, կարմրած աչերը կը շփէ ձեռքերով որք քիչ մը թրջուած էին արտասուքով :

— Մօրդ ձեռքը պա՛գ, մեղայ ըսէ՛, մէյ մալ չպիտի ընեմ ըսէ՛ :

Հայկանոյն ծուռ ծուռ մօրը երեսը կը նայի ու տեղէն չերերար :

— Անանկ է նէ՛ ես ալ Մարգար աղային Մաննիկը կը սիրեմ կըսէ մայրը :

Դարձեալ գոռում գոռում : Հայկանոյն այս յայտարարութեան վրայ ոտքերով գետինը կը ծեծէ և բարձր ձայնով կսկսի լալ :

— Ինչո՞ւ պօռալ կուտաս . . . :

— Դուն ալ թօհաֆ մարդ մ'ես, աղջըկանդ բան մը չես ըսեր միշտ ինծի հետ ես :

— (Պօռալով) Լռեցուցէք ասիկայ . . . ո՛վ պիտի մտիկ ընէ ասոր ձայնը :

— Մաննիկը չեմ սիրեր, եկուր նայիմ :

Հայկանոյն միշտ կուլայ :

— Ասոր վերջը :

— Հայկանոյն կը լռե՛ս, չէնէ քովդ գամ մի . . . մի՛ կարծեր որ հօրմէդ կը վախնամ :

Հայկանոյն գլուխը վեր կառնէ և հօրը կը դառնայ կը նայի խեղճուկ նայուածքով մը, շարունակելով միշտ բարձրաձայն լալը :

— Աս եղա՞ւ մի հիմայ, կը պօռայ այրն :

— Շատ աղէկ ալ եղաւ :

[Մնացեալը յաջորդ թիւով]

Ե. Ե. ՊԱՐՈՆԵԱՆ



ՇԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Բարե՛ւ . . . մեր քնթեցողներուն, մեր բռնիկներուն շուրջ. — Համակրելին Լիլա եւ Տիւլէկ. — Եռաձայն յօղուածագիւրներ. — Եռաձայն եւ . . . անօրի փոք. — Մագրի-գիւղ եւ Օրթագիւղ. — Եպիսկոպոսի մը վարձատրութիւնը :

Բարեւ մեր ընթերցողներուն, ութը երկար տարիներու դադարէ մը ետք չը կըրնալով մերժել Հանրագիտակի սիրուն հրատւէրը նորէն հրապարակ կ'իջնեմ, զարմանալի զուգադիպութեամբ մը համակրելի Տիւլէկեանի հետ. Իիսող՝ որ Տէօքմէճեանի հրատարակած Ծաղիկ-Լոյսերուն մէջ, Լիլաի և Տիւլէկեանի հետ եռաձայն յօղուածներ ունեցած է, պատիւ կը համարի իրեն վերաբերել իր ընդհատուած Գրոնիկներու շարքը, որոնց համար, աւելորդ է ըսել, իր նիւթերը կ'առնէ ուղղակի ժողովուրդին կեանքէն, իրեն նպատակ ընելով անոր բարոյականը, ձաղկելով մոլութիւնը և սիրցնելով անոր պարկեշտ կեանքը : Այսպիսի իբր յառաջարան :

Եռաձայն ըսինք մեր երեքին յօղուածներուն. ութը տարի առաջ այսօրու միտքերնուս չը պիտի անցնէր, բայց հիմայ ամէն ինչ եռաձայն է, օրինակ եռաձայն պօռեկ . . . եռաձայն պատարագէ մը ետք : Մագրի-գիւղի մէջ եռաձայն . . . անօթութիւն . . . յետ պատարագի, քանի որ հէգ դպիրները չունէ ու ձայն հատցնելէ ետքը, առտուն առաջին թռէնով Մագրի-գիւղ հեւ ի հեւ վազելէ ետք ստիպուած են ժամը 1ին (Ը. Ե.) կառայուածքով հեւ ի հեւ վերադառնալ . . . անօթի փորանց : Մինչդեռ այս կիրակի Օրթագիւղի մէջ գոնէ պէտքէկ կերցնելու բարեհաճութիւնը ունեցած են : Չենք ըսեր թէ անոնք փորեքին կշտացնելու համար գացած էին, բայց գէթ պղտիկ թեթեւ նախաճաշ մը Մագրի-գիւղցիներուն համար ջնջին բան մըն էր, բայց կամ կալանդորիի պակասն էր և կամ անտարբերութիւնը տիրած է անոնց սրտին վրայ :

Գաւառէն Եպիսկոպոսի մը վարձատրութիւնը կը խնդրուի՝ իր տասնամեայ բարեք պաշտօնավարութեան համար : Շիտակը զարմացանք, քանի որ բարեք պաշտօնավարութիւն միշտ կ'սպասենք Եպիսկոպոսէ մը որ կարեւոր թեմի մը առաջնորդն է : Ինչ վարձատրութիւն կուգուի, Արեւթիւն, բայց ինչ տարբերութիւն կայ Արեւլլալուն և չըլլալուն մէջ, մենք համակիր յիշեալ Եպիսկոպոսին, գիտենք որ միտքէն ատանկ բան չանցունէր եւ ըստ առաջնոյն ուղղամտօրէն կը շարունակէ իր բարեք պաշտօնավարութիւնը, հետեւելու համար Յիսուսի եւ աշակերտներուն ճամբուն : ԴԻՏՈՂ

ՊԵՐՈՒՄԻՆ ԵՄԵՐԵ

Աշխատութեան սենեակիս մէկ անկիւնը՝ պարզ chemiseի մը մէջէն ուր սովորութիւն ունիմ պահել ձեռագիրներս, կը քաղեմ այս գրութիւնը որ 1904 թուականը կը կրէ:

1904-908!!! Հորս տարեկան շուտիկ մըն է յօդուածս, հետեւաբար gatté:

Տեսէք թէ ինչեր եմ գրած այն ատեն, զոր առանց ուրթուչի, կը հրամցնեմ Հանրագիտակի երկսեռ ընթերցողներուն, հիմա որ բացառիկ թիւին հրահրոտ ժամանակը անցած՝ անառակին տեղը զգալի եղած է կարծեմ, եթէ կը ներէք ինձ՝ այսպէս ըսել սիրելիս Լիլա:

Ձեռագիրիս վերնագիրն է՝

ԹԷՒՄԷ ... ՉԻՖԹ ...

Երեք օրէ ի վեր տեսած չէի զինքը:

Ան առտուն երբ Եկեղեցիէն դուրս ելած ատենը պատեհութիւն ունեցայ հանդիպելու իրեն, ռաքեմ քօսթիւմ մը հագած էր նոյնա-գոյն գլխարկով մը գլուխը, վզէն կախուած պուաին երկու ծայրերը հովին՝ արագ արագ տուն կը շտապէր ցերեկուան ճաշին հասնելու համար: Զիս տեսնելուն կանգ առաւ, աչքերը աչքերուս ու ձեռքը ձեռքիս մէջ գրեթէ հեւալով կրկնեց՝

— Պիտի գաս անանկ չէ՞ ... կսպասեմ, շատեր հիւր պիտի ունենանք, բայց դժուար...

Գիտէի թէ նոյն իրինկունը երեկոյթ մը ունէին սարքելիք, օրեր առաջ խօսուած էր ատոր վրայօք, բայց կսպասէի որ նոյն իսկ իր բերնէն լսեմ invitationը: Եւ առանց վա-րանելու պատասխանեցի,

— Ամենայն սիրով Օրիորդ, եթէ ո՛ր եւ է...

— Արգելք եւայլն պատճառներ չեն, կսպասեմ, և արդէն շատ մը բաներ ունիմ ըսելիք ...

— Պիտի ջանամ ...

— Vouloir c'est pouvoir, ըսելով կառք մը ցատկեց, զիս ձգելով հոն trottoirին վրայ իր վերջին անուշ մնասրարովին հատնումին մէջ:

* * *

Կրակներու մէջ էր հիմա տունը: Ամէն մէկ պատուհանէն լոյսի չլացուցիչ հոսանք մը դուրս կը պոթկար: Փողոցէն անցնողը, չը գիտցողը, չի ճանչցողն անգամ կը կռահէր թէ այդ տան մէջ սովորականէն տարբեր բան մը կար: Հրաւրեալներ կառքերով, ոմանք հետիոտն տակաւ կը հասնէին, մինչ բարաւ անձրեւ մը թեթեւօրէն կը թրջէր այն գու-նագեղ sortie de bal-երը, որոնց մէջ ամփոփու-ած էին փափկասուն տիկիները:

Բալթօիս օձիքը վեր՝ հովանոցիս տակ պատսպար բաւական ատեն կեցայ դէմի տան առջեւ, ուր մոմ մը անգամ վառուած չկար: Այդ տարտամ վիճակիս մէջ կը մտածէի թէ երթալով էի թէ ոչ ...:

Ես որ ծնողացը հետ յարաբերութիւն չունէի, իրենց հետ de vue ծանօթութիւն մը միայն ունէինք, չեմ յիշեր պարտէզի՞ մը մէջ կամ թատերական ներկայացման մը առթիւ, ու հիմա միմիայն օրիորդին հրաւերին եկած էի անձամբ պատասխանել ...

Ասիկայ կ'եռացնէր արիւնս, և հակառակ չոր ցուրտին՝ կըզգայի թէ բոխօս միսերուս կը փակէր:

— Երիտասարդութիւն ... պարզապէս յի-մարութիւն:

Ալ չի կրցայ համբերել, հինգ վեց քայլա-փոխէն արդէն տանը դրանը առջեւ կը գըտ-նուէի:

Դուռը բացուելուն՝ մասնաւոր հիւրընկալ մը զիս դիմաւորելով, սանդուխներէն վեր տարաւ յանձնել ... անոր, որուն միայն հը-րաւրեալն էի:

Անունս կրկնուեցաւ երկու բերաններէ, և

պահիկ մը վերջ պաշտօնապէս ներկայացուե-
լու պատիւն ունեցայ անոնց՝ որոնք այդ ե-
րեկոյթը կը սարքէին, Տիկին մայրն և Տիար
հայրիկն օրիորդին:

Դժոխքէն արձակուած մեղաւորի մը շո-
շորդը եկած էր վրաս, երբ կը մտածէի թէ
ամէն բան կարգին էր, ներկայացուած էի,
ընդունուած էի, ես ալ մասնակից էի այն
ահադին հրաւիրեալներուն, որոնք լուսաշող
սալօնին չորս դին դեքերելով՝ ժամանակ
կանցնէին:

Հրաւիրեալները complet էին հիմա, ժամը
գիշերուան հինգն էր գրեթէ, հեռուն դաշ-
նակը ջութակին ընկերակցութեամբ կը գո-
ւար: Հոս ժպիտ մը, հոն սրամիտ causerie-
ներ, ասդին հինէն նորցած բարեկամութիւն-
ներ, անդին նոր ծանօթներու complimentներ,
վերջապէս ընդհանուր չչնկոց մը չափուած
ձեւուած խօսակցութիւններու, զորս կանց-
նին այդ կարգի ճօն երեկոյթներու մէջ պա-
րէն առաջ:

Ու կը գիտեմ, ես ալ իմ կարգիս, այդ
արու էգ ժխորը, ամբողջ բուրումնաւէտ
մթնոլորտը կը շնչեմ ընդ երկար ... և մէն
մի extraitի՝ դգիւիլ perfumeը շատ բան կը
խօսի ինծի իր անո՛ւշ աղբիւրէն՝ ուրկէ կը
բղխի:

Վիքթորիա, երկնային հրեշտակներու նա-
խանձը գրգռելու չափ գեղեցիկ, այդ իրի-
կունը ալ աւելի սիրուն և մոգական բան մը
գարծած էր, որուն վրայ յառած էին աչքե-
րը անոնց՝ որոնք մաս կը յուսային ... կար-
կանդակէն:

Ծիծաղ ի շրթունս, ամէնուն կը հասներ,
ամէնուն մօտը կերթար, խօսք մը, ժպիտ
մը, սիրուն նայուածք մը շնորհելու, և գը-
րեթէ բոլոր սալօնը իրմով կ'զբաղէր. Յան-
կարծ signalը տրուեցաւ, և ինչպէս սովո-
րութիւն է, հեշտօրօր վալս մը իր մեղմադ-
ձոտ խաղերով հրաւէր կարդաց ներկաներուն,
որոնք անմիջապէս զոյգ զոյգ սկսան դառ-
նալ շուրջանակի:

Որչափ դժուար է եղեր տեսնել սիրահալ
մէկու մը իր ընտրած թռչնիկին ուրիշի մը
թեւերուն մէջ գտնուիլը:

Մինչ անկիւն մը քաշուած կը դիտէի խել-
խօլ դարձողները, յանկարծ մօտէս անցան

անոնք, սիրտ սրտի՝ ձեռք ձեռքի: Վիքթոր-
իան հրեշտակ մը դարձած էր կարծես սեւ
սեւ սատանայի վը քով, որ մէջքէն բռնած
ինձ այնպէս թուեցաւ թէ դժոխք կառաջ-
նորդէր ...:

Պէտք չէ՞ր որ նախապէս ինծի դար, ինձ
հետ պարէր առաջին անգամ քանի որ ...
անփորձ տղայ ... չ'ամօթուիր, ասիկայ իմ
առաջին պատրանքս եղաւ սիրոյ մէջ, գէթ
այդպէս մեկնեցի Վիքթորիայի այդ արարքը:

Ժամերը կը յառաջանային, պարերը իրա-
րու կը յաջորդէին, որոնք կընդմիջուէին ըն-
տիր մեծարանքներով և ըմպելիներով, ամէն
ոք իր փառփառն համեմատ ատեն կ'անցնէր,
խօսիլ, խնդալ, դբօնուլ, ահա ինչ որ կանց-
նէր այդ ընդարձակ սալօնին մէջ ծայրէ
ի ծայր:

Պահ մը՝ առաւօտեան մօտ, տեսնելով թէ
յոյսերս ամբողջովին ի դերեւ ելած էին, և
թէ այդ աղջկան վրաս ունեցած սիրոյն վըս-
տահիլը պարզապէս յիմարութիւն էր, վարի
յարկը սենեակ մը քաշուելով մութին մէջ
սկսայ խոկալ և դառնապէս արտասուել իմ
առաջին սիրային յուսախաբութեանս վրայ:
Հոն մնացեր եմ:

Սենեակին դուռը որ կիսով չափ գոց էր,
մեղմիւ բացուեցաւ: Փողոցի օդային կաղի
ռեկլեպեռին ազօտ լոյսը փոքր ինչ կը բա-
ւէր, հոն՝ գրանը մէջ կեցողը զանալանել
արուն էգէն: Փոռուրի մը պէս թեթեւ կա-
նայի ստուեր մը սկսաւ գէպի մօտս յառա-
ջանալ խարխալելով պատերը: Եւ ...:

— Արա՛մ ... դուն հոս մինա՞կ ...

Վիքթորիան էր, որ եկած էր փախուս-
տիս, ծածկուելուս պատճառը հասկնալու,
բայց չա՛տ ուշ ...:

— Լուսնալուն կսպասեմ ... Ըսի մեղմ
ձայնով մը, մինչ ան մօտս սեփիւրիս վրայ ե-
կաւ նստիլ երկու ձեռքերը վրաս:

— Ինչո՞ւ, վեր չիգա՞ս ... ես ալ քեզի
կը փնտռէի մինչեւ հիմա ...

— Կը հաւատամ ... կրնայ ըլլալ ...
բայց կարելի չէ՞ որ դուն կրկին քու հիւրե-
րուդ մօտը ըլլաս ու ձգես որ ես առտուան
սպասեմ մեկնելու համար, տես բան մը չի
մնաց արդէն, դէմի տունները սկսան ստուե-
րոտիլ ...

— Արդէն գիտէի որ ... սէրդ կեղծ էր, գիտնալով խաբուեցայ ... ըսաւ կտրուկ կտրուկ և քիչ մ'ալ հեծկտագին:

— Ճիշդ իմ սրտիս, զգացումիս, մտածումիս թարգմանութիւնը ...

— Շատ լաւ, ինչպէս կրնանք զիրար համոզել կրկնեց, մեծ թին մէջ փայլատակելով իր սեւ աչքերը:

— Ինչպէս որ կզգաս ... ըսի պաղաւրէնս պահելով միշտ:

— Այն ատեն քեմէ չի՞ժք պիտի բռնեմ, եթէ գտնալու ըլլաս, իրաւունքը քու կողմը թող ըլլայ:

— Ինչպէս որ կուզես, բաւական է որ դուն համոզուիս ամէն պարագայի մէջ ...

Ու հազիւ թէ Վիքթորիայի առաջարկութիւնը պիտի գործադրուէր, յանկարծ դուռը բացուելով՝ տանը ջոջը, հայրը մոմ ի ձեռին ներս մտաւ, ճիշդ այն ատեն որ օրհորդը ձեռքերը գոցած ծունգերուս վրայ դրած էր սպասելով որ թէքմէ չի՞թը գուշակեմ ...

— Խայտառակ, անամոթ, անբարոյ, սրկալ ... հոս եկէք, սա սրկան դուրս հանեցէք տունէն կը պողար, մինչ ես շուարած շան պէս կը դողայի, չի կրնալով բան մը ըսել իր պատասխան:

Երկու զօրաւոր քեմէներ ճաշակելէս վերջ տեսայ թէ Վիքթորիա այդ ահագին հետաքրքիր բազմութեան մէջ հօրը ոտքերուն առջեւ ծնրադիր, արցունքոտ աչքով բացատրութիւն կուտար և իմ անմեղութիւնս կը հաստատէր ...

Այդ օրէն այսօր երբ ո՛ր եւ է օրհորդի հետ զրաւի մանամ, և քեմէ չի՞ժք առաջարկուի, իսկոյն կը յիշեմ Վիքթորիայի հայրիկին թէքմէն ... և չի՞ժք ըլլալ չեմ ուղեր:

Եւ ահա ինչո՞ւ միշտ ամուրի եմ:

ԲՈՊՈՍ.

ԶՐԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Անոնք որ — թէ Պոլսէն և թէ գաւառէն — առիթը չունեցան ձեռք ձգելու մեր Հանրագիտակ-Ալպօմը, որպէս զի այդ գեղարուեստական քաղաքիկէն զրկուած չի մնան, մեր երկու հազար սպառումին վերջին օրինակները Գրլըճեան գրատունը ձգած ենք, որուն գինն է գաւառի համար 3 1/2 և Պոլսոյ համար 3 զրուշ:

ԳՏՆՈՂԻՆ ՊՌԱՎՈ

- Ձի հեծնող Հրեայ մը:
- Առանց ակնոցի մօն շեռ մը:
- Եամասրգ վարժապետի մը լասիկ:
- Բուսուսարգ աղջիկ մը:
- Սոյֆասօսարգ դեղագիր մը:
- Էրկընէն գոհ կին մը:
- Կընիկէն գոհ երիկ մը:
- Երգում չընող խանութպան մը:
- Ճիւղ կռող նպարավաճառ մը:
- Առանց փորձի հիւանդութեան գլխուն զարնող բժիշկ մը:
- Լիֆիքասիօնը նակսին չի փակցուցած Բերայի մէջ խանութ մը:
- Մեռելոցի օրեր գերեզման չի գացող Տեր պապա մը:
- Ամսականէն գոհ գրագիր մը:
- Սառքեարի մէջ առանց բիրե, սիվ-րիսինկի ամառանոց մը:
- Անդրամօթիս ամուսնացող մը:
- Գաւառացի բաժանորդներէ դրամ չի պահանջող քերթ մը:
- Տարեցոյցներու մէջ պակեք չունեցող գրագէտ մը:
- Թաղական Խորհրդոյ նիստը ըսի-ըսալի:
- Ղալաթիոյ եկեղեցին գացող եւ պողաջա չունող ուխտաւոր մը:
- Առանց հրմէկուելու Սկիւսարի շոգեմուէն ելող մը:
- Գուավաք վեր չի բռող վարժապետ մը:
- Առտուն կանուխ Էրեսին գոյնը տեղը Բերայի շիսակ նամբէն անցնող մը:
- Կեսրոյը հետ տղիկ ընող հարսնուկ մը:
- Բերա ելած ասեմ վիթրիններուն առջեւ չի սննացող տիկին մը:
- Սիկառ չի ծխող ... պատանի մը:
- Ախա տեղեկօսը քիչ յոյն սպասուհի մը:
- Երկու տարի կանոնաւորաբար եւ ինքնաբերաբար բաժնեգին վնարող գաւառացի մը, (բացառութիւն յարգելի):
- Պեխերը վար վար միւսիւ մը:
- Կանուխ տուն դարձող Բերացի մը:

Բերա

ԱՆՏՈՆ ՍԱՐԱՆԵԱՆ

ԵՐԷԿԻ ԿԻՆԸ,

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԿԻՆԸ

ԱՆՁԻՆԻ

ԵՐԷԿԻ ԿԻՆԸ. — Ձեր տունը :

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԿԻՆԸ. — Աշխարհիկ տիկինը :

ՎԱՂՈՒԱՆ ԿԻՆԸ. — Դստրիկը, որ մանկապարտեզ
կ'երթայ դեռ :

Տեսարանը կ'անցնի . . . Երէկ, այսօր եւ վաղը,
Կեանքի թափառումն վրայ :

* * *

Երէկի կինը կրցածին չափ շատ զաւակ
կը շինէր, այսօրի կինը — ըլլա՛յ Դպտի կամ
. . . Ասորի — կրցածին չափ շատ . . . Ֆիս-
քան :

Քառասուն տարուան յաւիտենականու-
թեան մը համար կ'ամուսնանար երէկի կինը,
մինչ այսօրուան կինը . . . 40 ժամուան հա-
մար միայն : — Vitesse oblige !

Երէկի կնոջ յարգը կ'աւելնար . . . իր մի-
սին և ծաւալին աստիճանով, այսօրուան կի-
նը ա՛յնչափ աւելի յարգի է, որչափ նուազ
միս ունենայ :

Երէկի կինը սանքիմանքալ էր, այսօրուան
կինը . . . սառն մանքալ :

Երէկի կինը անօթի կը մնար և անպատիւ
չէր ըլլար, այսօրուան կինը անպատիւ կ'ըլ-
լայ և . . . անօթի չի մնար :

Ինքզինքը մեզի համար կը զոհէր երէկի
կինը, մինչ այսօրուան կինը — աւելի՛ դրա-
կան — մեզ ամէնքս կը զոհէ ինքզինքին :

Երկու մէճիտով գլխարկ մը կապել կըր-
նայինք տալ երէկ մեր կնոջ գլխուն, մինչ
այսօր՝ մեր ամուսնանք քիչ կուգայ և չատեր
կը հարկադրուին . . . ուրիշներու ալ ամուս-
կանին դիմել :

Երէկի կինը երբ դրամօժիտ մը ունենար՝
վստահ էր ամուսին մը գտնելու, այսօր,
դրամօժիտն ալ պալաղիցա՛ւ և որչա՛փ կի-
նեք՝ յանձնառու իրենց էրկան ասպազան իսկ
չտկելու, չեն յաջգիր նորէն ձեռք անցընել :
Բաւականաչափ մեծ հերոս մը որ յանդգնի
գիրենք ի Ս. Խորան առաջնորդել :

Խաչակիրներու ժամանակ դիւցազնութիւն
մըն է եղեր հազար հոգիի դէմ մէկ հոգիի
դիմադրելը, մեր՝ սովորական մահկանացու-
ներու ժամանակն ա՛լ աւելի մեծ դիւցազ-
նութիւն մըն է . . . կարգուելը :

Ահա՛ անոր համար է որ երէկի կինները
Եկեղեցիին Autelը կ'երթային, մինչ այսօրուան
կիններէն չատեր . . . օրէկ կ'երթան պարզա-
պէս մեղրալուսին անցնելու համար :

Երէկի կնոջ միայն մատներուն ծայրը համ-
բուրել յաջողելու համար . . . նոյն իսկ ա-
մենայն յարգանքով, պէտք էր հարստու-
թիւննիս փճացնել, մարգարիտէ մանեակներ
պարգեւել, ոտանուորներ գրել, արցունքի
գետեր շինել և յաճախ ինքզինքնիս կախել
մեր սենեակին առաստաղէն, այսօր բաւա-
կան է Թոգաթլեանէն տուփ մը չօգոյա նուի-
րել, որպէս զի անոնք մեզի նուիրուին :

Երէկի կինը ժամ կ'երթար, խոստովա-
նանք կ'ըլլար և Հաղորդ կ'առնէր : Այսօրուան
կինը շատ անգամ Աստուծոյ չի վախնար . —
արդ ի՞նչպէս կ'ուզէք որ . . . իր էրիկէն
վախնայ :

Իր ամուսինը կը յարգէր երէկի կինը, կը
քաշուէր անոր քով խօսելու և չէր կրնար
պարզ անունովը կանչել իր « աղա » ամու-
սինը :

— Ծօ՛ Ծաղիկ, կ'ըսեն հիմակուան կինե-
րը իրենց յարգելի ամուսինին, կրողը տեսնէ
սուրաք . . . :

Հօ՛յ հօ՛յ, ո՛ր գացիք հին օրեր, — նա-
հապետական աւանդութիւններ :

Մայրիկին պատկառելի փէշերուն տակ կը
դաստիարակուէր երէկի կինը, այսօրուան
կինը Բերայի մայթերուն վրայ կը փնտռէ
դաստիարակութիւնը :

Երէկի կնոջ շապիկը պարզ խաւսայէ կ'ըլ-
լար, գիշերնոցի նման բաներ, երկայն թե-
ւերով, ճիտը պատուելիօրէն գոց, չա՛տ չա՛տ
բարակ ժանեակով մը չրջագծուած, իսկ

այսօրուան կնոջ չապիկը նուրբ մուսուլինէ է, թեւերը կտրուած և մերկապարանոց:

Ահա՛ թէ ո՛ւր պէտք է փնտռել մեր ընտանեկան կեանքին անկումը:

Ո՛րչափ ատեն որ մեր կիներուն չապիկները պարզ խաւաւ էին, ընտանեկան երջանկութիւնը անապարտ կը մնար, բայց ա՛յն վայրկեանին որ սկսան ցանքիւլ ու մուսուլին քը սուլայէ ըլլալ, վրայ տուինք մեր «օջախ»ին ընտանեկան անդորրութիւնը:

Ճշմարիտ պարկեշտ կինը պարզ խաւայէ չապիկ կը հագնի միշտ:

Հինգ ոսկինոց չապիկներ կան այսօր. — ահա՛ ուր պէտք է փնտռել անբարոյութիւնը և ո՛չ թէ ... իմ յօդուածներուս մէջ:

Երէկի կինը իբր ծնրակապ պարզ քերիս մը կը գործածէր կամ կարմիր սովորական լաւքիկ մը, զոր ծունկէն վար կը դնէր միշտ: Այսօրուան կինը մետաքսահիւս ժառրքիքներ ունի, զորս կը կապէ ծունկերէն վեր: Պարզ տարբերութիւն մըն է այս, որ ահագին նշանակութիւն ունի ... կնոջ մը բարոյականին մէջ:

Երէկի կինը գիտէր եպիմկիւմեհի լափասի եփելու եղանակը երբ մէկդինիս ուռէր, այսօրուան կինը երբ քիչ մը ակռան ցաւի, Տօք. Զարդարեանը և Խնդիրեանը կը կանչէ՝ գօծելը քասիօնի համար:

Տունի կնիկ մըն էր երէկի կինը, փողոցի կին մըն է այսօրուան կինը:

Երէկի կինը տունը մաքուր կը պահէր և ակռաները աղտոտ, այսօրուան կինը ակռաները մաքուր կը պահէ և տունը՝ փիս:

Երէկի կինը՝ ո՛րչափ ալ ամիրայի աղջիկ ըլլար՝ դարձեալ խոնարարուհիի տաղանդ մը կ'ունենար միշտ, այսօրուան կինը՝ ֆիլպասիէ զատ բան չի կրնար եփել, ատ ալ՝ 100ին 99՝ ... այրելու պայմանաւ:

Երէկի կնոջ ամուսինը դուռը բաց կը թողուր և գործին կ'երթար հանդարտ սիրտով, այսօրուան կնոջ էրիկը պարտաւոր է գիշեր ցորեկ պահպանութիւն ընել իր ափիկներն չուրջը, որպէս զի ... թռչունը չկլէ թռչի վանդակէն:

Ամուսնի արհեստը խիստ ապերախտ ապարէզ մը դարձած է ալ:

Իմ օրուանս կիները՝ անծանօթին համար

ծարաւ և՛ իրենց ամուսինն քով չգտնուած բարեմասնութիւնները կը կարծեն գտնել երբորդի մը քով, որուն հետ անթել հեռագիրով մը — զոր Պ. Մառքոնի չէ հնարած — ժպիտներ կը փոխանակեն՝ շատ անգամ խեղճ ամուսինին գլխուն վրայէն: Աշխարհիկ կիները սխալած ըլլալին կը հասկնան ա՛յն օրը միայն, ուր այդ պղատոնական ժպիտները՝ ո՛չ պղատոնական ժպիտներ կ'ըլլան, դառն զղջումով հաղորդուելու համար հետեւեալ առտուն ...

— Էրկանս բրոնախը իսկ չարժե՛ր եղեր, կը խորհին այն ատեն դառնագին:

Բայց, շատ ո՛ւշ, աւա՛ղ:

Ամէն պարագայի միջ, լաւ է ... ուշ, քան երբէք:

Երէկի կինը հեղահամայր ոչխար մըն էր, որ կը կենար ուր որ կապէր, մինչդեռ այսօրուան կինը՝ եղջերու մը պարզապէս, մարդը ... կապուելու աստիճան խնդ կ'ընէ: Պայմանաւ որ ան ալ ... եղջերու մը չըլլայ իր կարգին:

Անուշապուր կ'եփէր, soylա կը դնէր, տախտակ կը սրբեր երէկի կինը, այսօրուան կինը իւր գրականութեան վրայ կը ճառէ, Շորէն կը զարնէ, գառք-բօսալ կը հաւաքէ և ամուսինը դժբաղդ կ'ընէ:

Երէկի կինը բնա՛ւ բան մը չէր գիտեր և, ծ՛հ, հանդիպտ էինք, այսօրուան կինը շա՛տ բան գիտէ և, աւա՛ղ, կեանքը զժոխք մը դարձած:

Կնոջ իրաւասութեան խնդիրը չի կար երէկ և կինը իր էրկանը բռնէնկութիւն ետեւէն կ'երթար, մինչդեռ այսօր հաղուադիւտ է գտնել կին մը որ իր ամուսնին ետեւէն երթայ, մինչդեռ ամէն ամուսին ընդհանրապէս իր կնկան ետեւէն կ'երթայ հիմա:

Նայեցէ՛ք փողոցը, — տես երէկ, երբ այր ու ամուսին փողոց ելլէին՝ էրիկը աւաղեւէն կը քալէր և կինը՝ կանգուն մը ետեւէն, այսօր — Nous avons changé tout cela! Ի՛նչպէս կ'ըսէ Մոլիէրի ակամայ բօխը — կընիկն է միշտ առջեւէն քալողը:

Երէկի կինը համակերպած ու հլու սպասուհին էր իր էրկան, այսօրուան կնոջ առաջին սպասաւորը իր էրիկն է, այվազը ուսնեկապանուհին վերջէն կուգան:

Երէկի կինը անմեղ կոյս մըն էր եթերա-
բնակ, որուն կեանքը սովորեցնելու vicieux
հաճոյքը կ'ունենայինք՝ հիմենեան սենեակէն
ներս, վարպետի հովեր առնելով անոնց հան-
դէպ, բայց՝ այսօր՝ դժբաղդարար կը խոստո-
վանիմ որ ապիկար յետաճնաց տղէտ մըն եմ
մէկէ աւելի տաճներեք տարու աղջիկներու
քով, որոնք իրենց համայնագիտական գի-
տութեամբը épater կ'ընեն զիս։

Մանկութիւնս, ո՛ւր մնացիր ...

Երէկի կինը մինչեւ տասներորդ տար-
ուընէն կը հաւատային որ մանկիկները ...
խորանին ետեւէն կը բերուին զենայիւով,
այսօրուան կինը տակաւին մանուկ եղած
ատենին գիտեն թէ մանուկները ինչպէս կը
գոյանան։

Ձեր պարեր երէկի կինը, այսօրուանը կը
պարէ և յաճախ ... խելքը կը դառնայ, ինչ-
պէս նաեւ տոտիսը։

Երէկի կինը ի՛ր կաթը կուտար իր զաւ-
կին, որուն զաւակները մօրերնուն կը քա-
շէին. հիմակուան կինները ուրիշներուն տալ
կուտան կաթը, և ահա՛ թէ ինչո՛ւ զաւկը-
ներնին ... Մարգուանի օրին կ'ունենան,
երբ կաթնատունին Մարգուանցի է։

Երէկի կինը Ֆուր-պօլ չէր խաղար, այս-
օրուանները կը խաղան և ... պօլ պօլ տու-
ներնին կը մնան։

Երէկի կինը Ծօթը կը կապէին և մէկ
Ծօթը ամբողջ կեանքեր կ'ապրէր՝ թուոնէ
թու, այսօրուան կինը արարդումանածեւ
գլխարկներ կը կրեն և երկու ամիսը անգամ
մը գլխարկին ձեւը կը մնանի և յարութիւն
կ'առնէ։

Երէկի կինը բոլոր հաստ զուլպոյ կը
հագնէին ո՛չ ոք կը անտէր ոտքերնին, այս-
օրուան կինը՝ իրենց հմայիչ ածուռ գու-
պան ցուցադրելու պատրուակով անպատկա-
ռօրէն սրունքնին կը ցուցնեն ամէն մարդու,
անա՛նկ որ, զոր օրինակ, դուք ինչ աղէկ
գիտէք մեր արկիւնին ոտքին երկայնութիւնը,
կարճութիւնը, հաստութիւնը կամ նրբու-
թիւնը։

Երէկի կինը մեր տունին անոտսագէտն
էր, այսօրուան կինը չի գիտեր տասը փա-
րայի մաքսանոս իսկ գնել, թէեւ ասոր

փոխարէն գիտէ չա՛տ մը բաներ՝ զորս պէտք
չէր լնաւ գիտնար։

Երէկի կինը իր էրիկէն զատ մարդու ե-
րես չէր նայեր, և չատ անգամ՝ ո՛չ իսկ տ-
նոր երեսը, այսօրուան կինը պարտ անձին
կը համարի կարծէք՝ ծովէն նոր հանուած
մարած ձուկի նայուածքներ ուղղելը ամէ-
նուն։

Երէկի կինը եթէ տալու մըն ալ խոռ-
նէին, ո՛չ ոք կը գիտնար, այսօրուանները
երբ Սրբուհի Թերեզայի նման բարոյական մը
իսկ ունենան, նորէն ամէն մարդ չատ մը
բաներ կ'իմանայ միշտ, բացի ... էրիկէն, և
քիչ մըն ալ թերթերը կ'արձագանքեն։

Հաւատացէ՛ք, երէկի կինը այսօրուանէն
աւելի կ'արժէր։

Թէեւ ամէն բանի մէջ թարմը, նորը
յարգի է, բայց կ'երևի թէ ատիկա ձուկերու
կամ չա՛տ չա՛տ լրագրական լուրերու ճա-
տուկ է։

Հին տեսակ կին մը մի՛շտ նախընտրելի է։

Միթէ գինին ալ անանկ չէ՞։

Գինովալու համար հին գինի խմեցէ՛ք,
երջանիկ ըլլալու համար հին կին մը առէ՛ք,
բայց ո՛չ ... տարիքով։

Նոր կինները, առնուլօ աղջիկները միայն
մարդս դժբաղդ կրնան ընել, աւա՛ղ։

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ՅԱԶՈՐԴ ՇԱԲՈՒ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՈՒՆԻՆՔ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԱՅՍ ԷԶԵՐՈՒՆ ՄԷԶ

ԱՆՁԻՆՔ

Անմուսնայի՛ն՝ Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Անխուսափելի՛ն՝ ԼԻԼԱ

Պատուակա՛ն՝ ՏԻՇԼԷԿ

Գրաբայա՛յօն՝ ԹՕԼԱ

Դիտողագիր՛ն՝ ԴԻՏՈՂ

Իսկիւսարցի՛ն՝ ՆԵՐՇԱՊՈՒՀ

Ամբակումեա՛ն՝ ԱՆՄԵՌՈՒԿ

Նոր գրի՛չ՝ ԴԻՄԱԿ]

ՃԱՖՃԱՖԻ ՍՈՒԱՌԷ

[Շարունակութիւն ճախորդ քիւեց]

Անմեղ կին մը՝ ճիւղաղ ամուսինին ծեծին տակ, տունը վրան դարձունելէն վերջ փեւին կողմէ դուրս ձգուած զոքանջ մը՝ այնքան չեմ մեղքնար, որչափ սուառե սարքող մը, որ անոր ասոր զուարթութեան համար բացառիկ ծախքերու և հոգերու կը մատնուի, և նիւթ կ'ըլլայ բամբասանքի ամէն անոնցմէ՝ որոնք հեւ ի հեւ կուգան լզուրբաւոր, ցատկել՝ խաղալ ու զուարճանալ, յետոյ մարդուն քիթին խնդալու համար:

Ահա այսպիսի մէկը դարձած էր Կարապետ աղան այդ իրիկունը տունէն դարձին եւ սենեակին մէջտեղը կեցած ամբողջ ուժովը կը ցնցէր տախտակամածը:

— Աֆէրիմ հայրիկ, նայէ առաջ չէ մէկըսէիր կոր ամա, կը նայիմ կոր քի վախդէն առաջ ինքնիրենդ տանա բուօլա կընես կոր... կըսէ մեծ աղջիկը Մէօհրիւպէ:

— Հրամանքաւ, դուն անանկ գիտցիր, կը նայիմ կոր քի չելլայ օտան վար գայ տէյի, զաթը նայէ մեցզիլ իբիի պէս եայլանմիշ կըլլայ կոր...

— Աման հայրիկ թօհաֆ ես, տահա նէլէր:

— Ան հիմա չես հասկնար ամա, ետքը խալապալըսը կոխէ տէ բիւթիւնը մէկտեղ վարի օտուպուխը թափին տէ մեռելի մոմի պէս ճիւղէրնին վեր տնիւրի նէ, ան վախտը թօհաֆը պիտի տեսնաք...

— Մ'ֆ հայրիկ... սըտեղը քանի հոգի պիտի գան... գա'ն գա'ն քառասուն իծծուն հոգի... աս ալ իրաւցունէ քէրէվէթ չէր եմ, չէնք շնորք տուն է...

— Մօրս մեռելին հարուր քառասուն ալ եկան ամա, եկողը չէնք շնորք եկաւ տիպը տեղ մը իլիշտիրմիշ ըրաւ նստեցաւ, աս իրիկուն գիտեմ ես զիսուս գալիքը... խօռօզներու պէս իրար պիտի կողեն... աս չէ՛ ըլլալիքը...

— Աման հայրիկ քեզի հետ ալ խօսք

չըլլուիր, երթամ վրաս շտկեմ, հիմա ուր եննէ կուգան...

— Ան չէ ամա, մարդդ որ սահաթ է չեմ տեսնար կոր...

— Հագուելու ելաւ, քուրս ալ վերն է:

— Քա՛ ինծի նայէ, շատ անանկ ճիծիլի պիծիլի բաներ մը՝ հազնիք, օրէնքէ կելլամ, ըսեմ տէ... անանկ միս թեւ ցուցունել չըլլար. ֆասուլիայի չուվալի պէս վերերնիդ վարերնիդ մէկ տիւղութիւն պիտի ըլլայ...

— Ինչե՛ր կըսես հայրիկ, իշտէ նոր չի նա՞ծ պուզնիս պիտի հագնինք, մէյ մէկ ալ կէսէն...

— Ես չէի ըսողը... հելէ ուղղունսուզ բան մը ըրէք տէ՛ սէյի ըրէք քի հարերնիդ ինչ կիւն տէօնիւմիւ ֆուռթունասի կը հանէ նէ...

Օրիորդ Մէօհրիւպէ կը մեկնի սենեակէն, ինքն ալ միւսներուն պէս հագուելու, միջ Կարապետիկ աղան կակսի ուրուր... քուր սենեակին և նոյն իսկ տունին չ'աղին պտրտիլ ու պրպտել:

Չօգ չէյ, էլ սլէմը պիտի գան ճուռճինայ ընեն տէյի, հէմ փարայէն էլիր, հէմ քնատ մնացիր, հէմ աչքդ չորս բաց քի... նէ իտէ, մէյմը գլոխնիս եկաւ, ուղենք չուզենք քաչենք պիտի, ըսելով երբ կը պարակեր, Տիկին Վերթին՝ ֆըշ... ներս կը մտնայ:

— Կարապետիկ աղա... նաւը՛լ, ինսոր եղայ...

— Քա ա՛տ ինչ խոյաֆէթ է, քեզի՛ ինչ եղաւ քի ատանկ ըռէնկիլ ուղուրմա ես տառցէր, հէ՛...

— Ինչ էվէլ կը տեսնաս կոր քի... աստա՛րն ալ չպիտի ընէի զահէր... տէր ուղորմեայ... մէկ մարդուն գլխաւորին աւնունը ըլլայ նէ, պատմա բէշմ հիւր կընդունի...

— Ֆիստանդ ձգէ՛, պազի բիրէ բոնել պէտք կըլլայ տէ դէմս, պատին կը դառնաս

քի ճիտդ չի տեսնամ տէյի, հիմա ի՞նչ եղաւ քի պաղնիքի չըխմաի խըլըխ ես մտէր ...

— Սուվառէի պիչիմ է աս Կարապետիկ աղա, չորցած չեմ քի կոցեմ, թող երթան տեսնան, հէմ ինծի նայէ, անկաճդ բե՛ր ... (միս ցուցունեմ քի, տեսնողներն ալ անասընա պագ տանասընը ալ ըսեն ... , աղջիկներուս համար է իշտէ, չե՛ս հասկնար կոր...)

— Ամօթ է քա, գնայ վերէն եէմիչի մանտիլ մը բեր տէ ճիտիտ կապէ, տահա՛ նէլէր...

— Դուն մի խառնուիր ճանըմ ... ա- նանկ չի որոշեցի՞նք քի, ծան չպիտի հանէիր տէյի ... ըսելով քօնսօլին վրայի կաղին ֆիթիլները վեր կառնէ ու երկու մոմ ալ գոց վարագոյրներուն ետին կը դնէ սէտիբին վըրայ:

— Վերծի՛ն, հէյա՛լ ալ պիտի խախցու- նենք ...

— Նասը՛լ հէյալ ...

— Ի՞նչ գիտնամ, բէրտէյին ետին լուս դերի ...

— Ան դուն չես հասկնար, դուքէն տես- նողը ըսէ քի Կարապետիկ աղային տունը լուսերուն մէջը կը բռնկէր կոր տէյի ...

— Բռնկիլ մը կոյ ամա պէ՛տիս մէջն է, կայնէ նայինք ճախա ընեմ ըսելնիքէն կըր- նամ նայիմ ժամուն թուումպան վազցու- նէր ...

— Հէմա լաքլաքին ձգէ տէ ինծի մտիկ ըրէ, եկողներուն աղուոր ընդունելութիւն պիտի ընես, տայիմա սուռաթըդ բիշմիշ պա- չի պէս խնդում, ակումներըդ դուրս պիտի ըլլայ. կոարտուիս պիտի, ամէնուն խաթըր խօշ պիտի ընես ...

— Վաքանցային ճընկոտախը քանիին պիտի զարնես ...

— Նասը՛լ վաքանցա, ինչե՛ր կըսես Կա- րապետիկ աղա՛ ...

— Ինչ գիտնամ դպրոցն ենք ո՛ւր ենք, սանկ պիտի ընես նանկ պիտի ընես, տահա չեղաւ նէ բիշմիշ պաշ տառցուցիք իս ...

— Սանքի ասոնք կըսեմ կո՛ր քի, միտ- քըդ ըլլայ տէ մենք մեզի եղածնուս պէս ֆօլեա չի պանաս, եանի իրիմօն իսկէլէսին հոս պերես նէ խելքս կլոխս չի դար, անանկ կը մարիմ կիյնամ ...

— Զաթը եղաւ ըլլալիք, բան մը քի

գլոխս եկաւ, ըլլայ չըլլայ ձեր ճուրին պիտի երթամ, ֆախաթ նայէ թէքրար կըսեմ կոր, նամուսի դպչելիք բան մը տեսնալու ըլլամ նէ, մարիլ չէ քի, չորս հողիով քեզ տա- նելին տեսնամ նէ՝ ֆութուուս չեմ ընէր, գիտցածէս ընելիքէս շաշմիշ չեմ ըլլար ...

Նոյն ատեն օրիորդները՝ Մէօհրիւպէ ե Ուսկուկ, ծիրանի գօտիի պէս գոյն գգոյն ժապաւեններով թուալէթ մը ըրած, ալուրին պարկը մտած ելածի պէս ալ քսուած սենեակ կը մտնան:

— Հայտէ՛, բերտէն բացէք տէ միջիւե- քի գա՛ն նէ բուզա մը ընենք կըսէ Կարա- պետ աղան, մէկ կողմ քաշուելով ե պիշ պիշ վրանին նայելով:

— Նասը՛լ բուզա, ի՞նչ ըսել կուզես, կոր ... կը ձայնէ տիկինը:

— Զամպազ չպիտի խաղան ասոնք, ել- լան ֆալցօ մը ընեն նէ խախք ըլլան նէ ...

— Իրաւ ո՛ր խելքիդ է եկեր քուկին Կա- րապետիկ աղա, ասանկ երթալու ըլլայ նէ սեւ երած տեսածի պէս ինծի անանկ կուգայ կոր քի խախք պիտի ընես մեզի ...

— Քա մէյմը ասոնց վրայ նայէ ... Ի՞նչ խըլըխ է քա ասոնք, պալօղի օյինծի են ի՞նչ խառնախաի են ...

— Մեղայ Տէր Աստուած, ճահիլ չեն մի, մօթութի պէս սեւ հագնելու չէին, որբե- ւարի ալ չե՛ն ... չօգ չէ՛յ ... , հէմ ասանկ քէռթէներու էրիկմարդ մէջ չի մտնար ...

— Հիմա չի մտնար ամա, էրիկմարդ մէջ մտնալու քէռթէները ետքէն օռթան պիտի ելլան, համբերէ, Կարապետը ըսաւ ըսէ, տահա լուսնալուն շատ կայ ...

— Վարէն դուռը կը զարնուի:

— Աղջիկներ, դուք վէրտիվէնին վրայէն պիտի ընդունիք, Կարապետիկ աղա, դուն ալ դռանը էշիկին վրայ պիտի կենաս ...

— Աղէկ ըսիր, էշէկին տեղը հոտ տեղն է զաթը ...

— Ես ալ օռթա սուֆան պիտի կենամ, աղուն ըսէ դուռը բանայ ... կըսէ տիկին Վերծի՛ն, բան գիտցողի հովերով:

— Մայրի՛կ, մայրի՛կ, անկաճներդ սրբէ, բուտուան չես կերցուցէր ...

— Թէմրիյէ ունիմ ան է, զարար չունի օղերս կը գոցեն...

Հրաւիրեալներէն ընտանիք մը ներս կը մտնան, ու բոլորը մէկ ուրախ զուարթ վեր կելլան, սալօն անունը խոշորութենէն փրկող սենեակը:

Մէկ ժամուան մէջ գրեթէ տասը տասն և հինգ ընտանիքներ յաջորդաբար հասնելով, սենեակը լեցնելէ վերջ կամաց կամաց դուրսի սուճան կը քշուին:

Կարապետիկ աղա միջոց մը կինը քովը կանչելով,

— Կընիկ, կուզես նէ մանչուն ըսնք դուռը չի բանայ ալթըն, եկողներուն ալ թող ըսէ քի, մնացածները գալ տարի թող հրամմէն, զէրէ տէօշէմէն չաթըն չաթըն կընէ կոր ...

— Քա՛ ճանըմ սո՛ւս, սիրտս վեր մի հաներ, թող երթան գան, տեղեքնիս կէնիշ, իքուամիս պօլ ...

— Մէկ սահաթին մէջը աստար լեցուցան նէ, քիչ մըն ալ ասնի նէ ի՞նչ պիտի ըլլայ ... չէնէ դիմացի երզնիւն օտան բաց տէ մէկ թախըմ մըն ալ հոն թող երթան նստին ամա, դուռը տեղէն հանելու է, ան դուռը գոցուելը գործիս չիդար ...

Տիկինը դուռէն կը կանչեն, և հա՛ա երեք երիտասարդներ առաջնորդութեամբ միւսիւ Բարսեղին՝ դրացիներուն տղոցմէն մին, կուգան կը կենան Կարապետիկ աղայի առջեւ ու միւսիւ Բարսեղ կսկսի ներկայացնել զանոնք:

— Միւսիւ Հէնուի Պիպէն ... միւսիւ Եղուարդ Թոմարեան, միւսիւ Լէվի Պօխօր ... Պատիւ ունիմ քեզ ներկայացնելու զիրենք, որոնք ի պատիւ ձեզի այս գիշեր յօժարակամ ընդունած են ձեր հրաւերը և անձամբ ալ ներկայ դառնում ...

— Աղէկ, շնորհակալ եմ տղաս ամա՛, ասոնց հիշ մէկը չէի ճանչնար կոր ... տա՛վէթ ընկա ալ չիյտեմ կոր ... եաղլը չի գա՛ն ...

— Օ՛ ... ի՞նչ կըսէք Կարապետիկ աղա՛ ... միթէ կարելի է ... անցեալ տարի չոգե՛նաւին մէջ, և նոյն իսկ այս տարի Եիւքէք գալտըրըմին վրայ դէմ առ դէմ եկանք ... չէ՛ք յիշեր ...

— Նէ իսէ, բարով եկան:

Քիչ վերջը երիտասարդ մը տամամը թե՛

ւրն առած ներս կը մտնայ սենեակէն և դարձեալ միւսիւ Բարսեղ զանոնք ներկայացնելով,

— Միւսիւ Պաթիսթ Կարճուկեան, Օրիորդ ... երիտասարդին դառնալով,

— Ներեցէ՛ք, Օրիորդ իւշեան ...

— Մատմազէլ Քալեօրի Բաափտէս ... կըսէ միւսին:

— Այո՛, Օրիորդ Քալեօրի Բաափտէս ...

— Ասոնք ալ չեմ ճանչնար կոր, Բա՛ւր սեխիկ օղլում, ասո՞նք ուրկէ ելան ...

— Միւսիւ Պաթիսթ ճանչնալու էք, քօմիսիօնճիի քով քաթիլօկուած է, իսկ օրիորդը ... ք ... իրենց դրացիներէն ըլլալու է ...

— Էյ եազրուս քիչ մը տահա աս սու՛վառէն ուշ ձգէինք նէ, Չինիմաչինէն ալ տալէթիներ կուգային պէլքի ... ասոնք հիշ չեմ ճանչնար կոր ...:

Բազմութիւնը կը լեցուի սենեակին մէջ: շատեր իրար չի ճանչնալուն լուռ մունջ կը նստին, զիրար դիտելով, իրարու հետ խօսակցելով, և միջոց մը Կարապետիկ աղան դուռս կելլայ ու հաղիւ թէ վարի բակը ի՛չած թէ չէ, դուռը կը զարնուի, և իսկոյն սպասաւորը կը վազէ բանալ,

— Կեցիր ծօ՛, հէմէն մի բանար, դուռն ասդին եկուր ես հարցնելիք ունիմ ըսելով՝ դրանը կը մօտենայ և կը հարցնէ,

— Քի՛մ օ՛ ...

— Մե՛նք ենք մե՛նք ...

— Հասկցա՛նք ամա ո՛վ էք, ի՞նչ կու՛զէք ...

— Տէր ողորմեա՛յ ... ինչ ըսել է, սու՛արէին տունը աս չէ՛ ...

— Հոս սուգառէի տուն չէ, Կարապետին տունն է ... եաղլը եկեր էք ...

— Ճանըմ բացէ՛ք, կը մտնէ կոր դուրսը, միւսիւ Բարսեղը հոգ չէ՛ ... չօգ չէ՛յ ...

— Միւսիւ Բարսեղին տունը սօխախին մէջն է, պախալին վրայի թառափի տունը, դառնալնուդ պէս զէմերնիդ կելլայ ...

— Բայց ներեցէ՛ք որ դիտել տանք ձեզ թէ ... կըսէ առնական ձայն մը:

— Քանի՛ հոգի էք ... կը հարցնէ Կարապետիկ աղան, դրանը ետեւէն:

— Ճանըմ ի՞նչ ըսել է, էրիկ կընիկ, երկուք ալ թէյդէիս աղջիկները, աղբարըս, մէյ մըն ալ աղբօրըս երկու առխատաշները...

— Մէկալ թռանվայր նստեցէք, տեղ չի գայ ...

— Ի՞նչ կըսես կոր, ի՞նչ կըսես կոր ըսելով՝ Տիկին Վերժին վրայ կը հասնի, և ուժով մը ամուսինը հրելով դուռը բանալ կուզէ։

— Կընդի տունը վար պիտի գայ, ասոնց էօրեմին սէպէպ պիտի ըլլաւ ...

— Քա ճանըմ տալէթլի են նէ ...

— Քա ո՞վ տալէթ ըրաւ, ես եմ նէ խապար չունիմ ...

Ու դուռը բացուելով բոլորն ալ ներս կը մտնեն։

— Աչկ օլտուն տիկին Վերժին, ո՞ր սահաթ է դռանը տակը ֆուխարէի պէս կը դողանք կոր, թէրպիյէսիզ մէկը դրեր էք հող պիր միւմբիւն չի բանար ... Կըսէ հիւրերէն տիկինը, մինչ անոր ամուսինը,

— Ո՞ւր է նայիմ ոս էչէկ հերիֆը, թէքմէիս տակը պիտի առնեմ ...

— Քա աֆ կընէկ քուրուկ, մանչը քիչ մը թիւուրիւ մըն է իշտէ, էյ բարով եկաք ըսելով վեր կառաջնորդէ, մինչ Կարապետիկ աղա անուր յիշցնեցով դուռը կը կղպէ վեր կեւայ։

— Պապամ մէզաւտան չըգսա աչմայաճաղըմ վէսսէլամ ...

* * *

Կամաց կամաց սենեակը և մէջը գտնուողները կը տաքնան, պարերը կսկսին միսօֆօնի մը առաջնորդութեամբ, և գտնուող միւսիւնները ձեռքերնին չփեղով տամաներուն վրայ աչք կը պտըտցնեն էլէկէլի մը ձեռք ձգելու համար։

Քիչ վերջը, ան անով աս ասով կսկսին դառնալ սենեակին մէջ, ու բոլոր տարեցները, որոնք քոքոռ քոքոռ բազմոցին վրայ նստած երկնցած էին, ոտքերնին վեր քաշելով կը կծկուին՝ տեղ տալու համար թռուցիկ բէշերուն, որոնք մանուկներ քաղաքի պէս կը դառնային շուրջանակի։

Վարը Կարապետիկ աղան, որ առանց տեղ մը տիտիկ ընելու՝ ֆըռըլ ֆըռըլ կը դառնար, կը հանդիպի օրորդի մը որ, հոն կեցած չորս ղին կը նայէր շուարած։

— Ի՞նչ է ան մատմազէլ, ի՞նչ կուզես ... կը հարցնէ ...

— Սաս բէռիքալօ քիւիէ, թէլօ... բու... բոսթօլէնէ ...

— Նէ՞ տէյօրսուն մատմազէլ, եօգարսա ճանըն մը սըգըլտը ...

— Օհի քալէ, էղօ իւքա նա սառօթիքօ, թին ...

— Հասկցանք ամա, պէն տնտեսուհի միիմ ... նէ՞ խալթ եէր, նա շու գաբուլու աչ օրտա տըր ... Վայ քէօթօղլու, սօնը սօնը պու խալթը տա կէթիւրտիւէր պաշմա, ըսելով՝ դուռ մը կը բանայ ի հանգիստ օրորդին, և ճիշդ այդ պահուն՝ տիկին Վերժին որ, պղտիկ անառակ տղու մը պէս իր ամուսնոյն բէշը չէր ձգեր՝ վրայ կը հասնի։

— Քա՛... Կարապետիկ աղա՛... աֆէրիմ, ես ալ լէվին լէվին քեզ կը փնտռեմ կոր, մէյէր իսէ՛ ...

— Մէյէր իսէ՛ Կարապետը հոս եկողնեւրուն տնտեսութիւն կընէ կոր եղեր ...

— Եաղմա չիկայ, վրան մի՛ գոցեր ... տեսայ տեսայ, աչքովս տեսայ քի աղջիկը օտան խոթեցիր, ան ալ իմ տեսնալուն պէս դուռը գոցեց ...

— Քա՛, ասանկ բաները էրիկ մարդու գործ չեն, աս միսաֆիրներուն ըսէ քի սըխըլմիշ ըլլան նէ քեզի թող հարցունեն ֆէռահնալիք տեղը ... հասկցա՛ր, խրոսէս արուններս խաֆաս ելաւ ...

— Էսկի խուրտ սէնի՛ ... չէնէ մի վրայ հասայ տէ անուշը կապեցիր։

— Պէլքի ալ պիտի կապել տար ամա՛ ... նէ իսէ, տուն ատոնք ձգէ տէ ցառկողնեւրուն ըսէ քի կամաց դառնան, լաստիկի պէս փոր կուտայ կոր թալանը, Ալէմ տաղիին խօսու պաչին չենք, տուն է, տախտակ է տիպերնին, ետքէն չեմ խառնուիր ...

— Տըռ տըռ... ի՞նչ պիտի ըսէի՛, հա՛, ինծի նայէ, էյէր մէյ մըն ալ տեսնամ քի ան կարմիր պուզլուին կը նայիս կոր նէ՛ պաշխա թիւուրիւ կը խորաթեմ հետդ գիտցած եղիր ...

— Նասը՛ պուլուզալը ... ո՞ւր է, ո՞վ է քի ...

— Զիյտեմ ալթըլս, իշտէ ա՛ս խըտար, հէլէ մէյմընալ տալափ ըրէ տէ պօյըդ տեսնամ ...

— Հայտէ քա՛, հայտէ՛ գէվգէ՛կ... իրաւ քի տեղ մը կը նայիմ կոր ամա, սահաթին...

է քի երբ օխուէլը դառնայ տէ փալամաւը քակելու վախտը պիտի գայ տէյի...

— Լուսծունենք պիտի, լուսծունենք... ըսելով վեր կելլայ:

— Իշտէ պու, գառը տա տէրսէն պէօյլէ օլմալը... նէյնեքսին մալը...:

Հելլենուհին երբ դուրս կ'ելլար հանգըստարանէն (.), յանկարծ սանդուխներէն վար երիտասարդ մը վազելով՝ զինքը կը դիմաւորէ:

— Բու իսէ, ախ բախի մու, ֆօլմու, նա սէ խառօ, սէ երեւփսա արանու քէ տէ սէ իվու...:

— Ախ... տոօրի քալէ, քիթաքսէ բիոսէի...:

— Ա... ինէ աֆթօս օ Բառաբէտիս... Էնեասու... էլա սթօ բլայի նասէքօ... ըսելով թիւէն մտած մութ սենեակ մը կառաջնորդէր՝ կարապետ աղա համբերութիւնը հատած:

— Միւսիւ, վերտիվէն պու թառաֆտա տըր... եաղլը կիտիօրսընը...

— Պիլիբիմ քիթէ Բառաբէտիքի, մա մատմաղէլ պիտ աղ սէօքիւստիթէծէք քօռսէ, եաթի սիծաք վառ...:

— Էյի ամա սէն օնուն պէսլէմէսի տէյիլ սին եալրոււմ, կօէրէն նէ տէր...:

— Բալէ զառառի եօք Բառաբէտիքի աղա մու, հէլպէթտէ սիզ տա ծահիլ օլմիս սինիզ քայմէնէ նէ զարաթի վառ... Իմարթօն...:

— Պանա պազ միւսիւ, սէն մատմաղէլին քօռսէսինի չըգարըրսըն ամա, պէն տէ սէնի գարուտան տըշարը չըգարըրմ... աղանատըն մը... հայտէ եօգարը, զէրէ սէսիմի չըգարաճարմ...:

— Ախ, քաքօխոօնօնախիսնէ բալիօ անթոօրէ... քալէ նէ օլուր իմիս պիր բարցա...:

— Պուրասը Սազըզլընըն պալօզու տէյիլ կէօղիւնիւ ալ... ըսելով տիկնոջը կը ձայնէ՝ բա՛թ բա՛թ սանդուխին զարնելով. հո՞ս եկուր քա՛, հիմայ բայտօս պիտի պօռամ, հիմայ հա՛...:

(Մնացածը յաջորդով)

ԼԻԼԱ



ԹՕԼԱՆ ԵՒ ԻՐ ՔՍԱԿԸ ՆՊԱՍՏՈՒԱԾ...

Ֆրսքիսի պէս լեցուն սրահ մը՝ Ամբաստանական բացատրութիւնով:

Օթեակները լեցուն, բարթէրը լեցուն, բարատին լեցուն մարդերով, աթոռներու տակն ալ լեցուն... ոտքերով, և նոյն իսկ կիւսէն... դրամով և ասոնք ամէնքը թօլալին համար:

Հաստ քօմէտին սկսաւ... հաստ գլուխ մարդոց համար:

Պարոն Բամբլար:

Այս գօմէտին մէջ թօլա շատ խնդացուց... առանց քիչ մըն ալ ինք խնդալու:

Դիտելի է որ թօլախան միշտ արտառոց թիբերու զերերն է որ կատարելապէս գըլուխ կը հանէ... եթէ մէկ ոտքն ալ էնմէ իջած ըլլայ... քանի մը քառորդ ժամու համար:

Միննսն վերսին — որ խօսքը մէջերնիս չըլլար նէ աւելի պատշաճութիւնը յարգըւած կըլլար — Լն. Լն. Լն. Լն. Լն.

Տիւրան Տիւրան կամ բարակ քօմէտի, որ հաստ քօմէտի մը կրնար ըսուիլ, քանի որ հաստ մարդիկներն ալ հասկնալով խնդացին...

Ասոր նիւթը քիչ մը կը յիշեցնէ Հանրագիտակ կարդացողներուն ԼիլԱի երայիս բառքի զառեշտականը:

Ամէտ Ֆէհիմ էֆէնտին, իր համբաւին... անկիւնը տուն մըն ալ կանգնեց՝ Յիշատակելի է իր հիացումի և հեգնելու ձեւերը և բնական: Ամէն ատեն որ Ամէտ Ֆէհիմ էֆէնտի, երբ ձեռքը վեր քարձրացնելով թօլախանը կը կեղծէր ըսելով,

«Բալիպա՛ սիզիկի օղբաւանապ»:
հանդիսականները կը ձաթէին խնդալէ:

Երուանդ թօլա պախալ եղաւ առանց պախալութենէ փրսո՛ր մը բան հասկնալու, և Նուպար փաստաբան՝ առանց փաստաբանութենէ բան հասկնալու... Եւ նորէն թօլապախալութենէ փաստաբանութեան դարձաւ և Նուպար փաստաբանութենէ պախալութեան և առանկ պիտի չարունակէին եթէ վարազոյրը չ'իջնար:

Դիտելի պարագայ մը: Աղաւնի կամ Արաքսի սկսնակ դերասանուհին հանդիսականներուն վրայ շատ պազ տպաւորութիւն մը թողուց եւ շատեր զայն Յոյն գիտցան երբ կըսէր, «Պեն գօմամը պօսամալ իսեռիս»:

Վերջին ժամ: Թօլաին քսակը հանդարտ է... եթէ ալեկոծութիւն չգայ խանդարել:

ԱՆՍ.

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐՄԱՇ-ԽԱՍԿԱԼ. — Տեղւոյ թաղ. Խոր՝ ընդ գանձապետը ուսուցչին թոշակներէն երկու ոսկին թէեւ չի ծամած կըլլել ուսուցած է, սակայն զգայուն կարմրուկները կը ուսնելով անիրաւութիւնը՝ չեն յօժարած մինչեւ ստամոքսը կամ ուստա Մաթոսը իջնել: Ճարտար վիրաբոյժի մը պէտք կայ դուրս քաշելու համար: (Ատաբաղարի մեր նախորդ գործակալ Տօք. (.) Կարապետ Պաւսեանին ղիմեցէք, անզգայարար կը քաշէ այդ ոսկիները... փորձով գիտենք. Ծ. Խ.):

ԵՒՏԻ-ԳՈՒԼԷ. (Հիւանդանոցէն). — Կարգ մը հիւանդներու պաշտպաններուն կամ այցելուներուն կողմէ բերուած նոյն իսկ անվնաս ֆուէկ իւզիւմիւ շուռուկները հոս իբր մէսսակար (.) գրաւուելով՝ գիշերը ամէն մարդ պառկելէն վերջ զիֆիւմիւ կըլլան կոր, ինչ կըսէք: (Ասանկ գիր մըն ալ Հոգաբարձութեան գրեցէք կըսենք. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Յաւելտ ողբացեալ անարժաթ բանաստեղծին՝ Պետրոս Դուրեանի եւսեալուն և վեցերորդ մահուան տարեդարձին առթիւ մէկ քանի երիտաւարդներ անարժաթօրէն արցունք թափեր են գերեզմանին վրայ: (Անշուշտ, փոխանակ ծաղկեփունջ մը դնել և կամ քահանայի մը օրհնել տալու, անանկ չէ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Հոս ամէն անոնք որոնք մէկ քանի օրուան ամառնային օդերէն խաբուելով՝ բըթարըթըլ պոլուներով պտտեցան, պաւսան հնմէ խառաքելի ցուրտէն ազդուած միտիւր պոլոյտաճիւ պէս կրակարանը վիզերնէն կախած եռածայն հեքու ընելու վրայ են: (Վախ ետվում, երկկոթներու սեղոնն ալ չըլլար պարէ. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Ե. Թօլայեանի նպատին օրը պատմին կէս խուսուր ձգելով ժամ առաջ թատրոն հասնելու համար կանուխէն դիմող կարգ մը ընտանիքներ լոծերուն մէջ բանիւր հաց կերան: (Նպատուողն ալ յետ ներկայացման հինտի տօլմախ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Տեղւոյ երրորդութիւն եկեղեցիին համար սօն սխաբեմ եռածայնի խուսմը մը կազմելու գաղափարը առ այժմ ջուրը ինկաւ, նկատելով որ ձմրան այս եղանակին տմէնուն ձայնը հարբուխէն չաթլախ զուռնայ դարձած է:



ՍՐԱՄԻՏ ԶԲՕՍԱՆՔ

Նիկոմիդիայէն Տիար Արամ Զաքմաքեան այս անգամ՝ մասնաւորաբար «Հանրագիտակ»ի համար բաւական թիւով մտքի սքամիտ զօրանքներ հասցուցած ըլլալով մեզ, կը փութանք կարգաւ հրամայել մեր Գերագնիւ երկսեռ ընթերցողաց, որոնց համար շինծու և անուանական պարգեւներ թէեւ չենք խօստանար, սակայն ճիշդ լուծողներէն վիճակաւ շահողին Լիլա կը խօստանայ խիստ երգիծական և սքամիտ ոտանաւոր մը ձօնել անուան, լուծողին անուան սկզբնատառերովը հիւսուած (acrostiche):

Ա.

Հարիւր դանեկան ունիմ, կուզեմ գնել առարկայներ, որոնցմէ ոմանք արժեն 1 փարայ, ոմանք 3 դանեկան եւ ոմանք 5: Արդ իւրաքանչիւրէն քանիկա՞ն աւանելու եմ: Պայմանաւ որ հարիւր դանեկանի փոխարէն հարիւր առարկայ ունեցամ:

Ա. Ա. 2.

Պատասխանները այս կտորին վրայ և կամ այս կտորնը միասին պէտք է դրել:

Արտոնաւոր ԱՐՄԱՇ ԼՈՒՐԵՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԼՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻՐԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՅ ՆԻՆԸ

Այդ երկու պարոնները ոտքերնին գետին դրին հանրակառքէն, և դէպի Լըթուալ գացին և հնչեցին նեղ տան մը դուռը: Այս տանը մօտերը, փողոցին անկիւնը, Շօլմա կրցաւ մութին մէջ պահուրտիլ . . . :

Գետնայարկի պատուհաններէն մին բացուեցաւ, մարդ մը, կըր գլխարկով, գոցեց փեղկերը, փեղկերուն վրայի մասը լուսաւորուեցաւ:

Տասը վայրկեան ետքը, մարդ մը եկաւ և այս մի եւ նոյն տանը դուռը հնչեց, յետոյ ուրիշ անձ մը, յետոյ ինքնաշարժ կառք մը, ուրկէ երկու հոգիի ելնելը տեսաւ Շօլմա, Արսէն Լիւբէն և պատասպարուած ու թանձր քօղով ծածկուած կին մը:

— Խաւսեալ կիներ անկասկած, ըսաւ Շօլմա, մինչ կառքը կը հեռանար:

Թողուց որ պահ մը անցնի, մօտեցաւ տունին և պատուհանին դուռն ելած կողմէն շուրջուեցաւ և ոտքերուն ծայրերուն վրայ բարձրացած, կրցաւ պատուհանին վերի մասէն աչք մը պտըտցնել սենեակին մէջը:

Արսէն Լիւբէն, վառարանին կրթնած, ոգեւորութեամբ մը կը խօսէր, իրեն շուրջը կեցած, միւսները ուշադրութեամբ մօտիկ կընէին զայն: Ասոնց մէջ, Շօլմա, ճանչցաւ բնականութեամբ պարոնը և կարծեց ճանչնալ ճաշարանապետը, գալով խաւսեալ կնոջ, ան ալ կռնակը դարձուցած էր, թիկնաթոռի մը մէջ նստած:

— Կը խորհրդակցին, մտածեց Շօլմա, այս իրիկուան միջադէպերուն, ա՛հ եթէ անոնք ամէնքը մէկ ձեռք անցունէ՛ի . . . :

Բայց նստող կիներ ոտքի ելաւ և լոյսը երեսին զարկաւ:

— Օր. Տէսթանօ, մրմռաց Շօլմա ապշած . . . Օր. Տէսթանօ հո՛ւս . . . իր մարդիկներուն հետ . . . :

Ներսի մարդերէն մին շարժելով, գետին նետուեցաւ ինք և մութին մէջ մտաւ և ինքնիրեն կրկնեց . . .

— Պ. Տէսթանօի աղջիկը . . . Բլօթիլտ հո՛ւս . . . , բայց ան ատեն խաւսեալ կիներ ինքն է, է՛հ, այո՛, մոռցա՛յ որ խաւսեալ մարդերը սեւցած էին պարոն տ'Օթուաի ոճիւրէն ետքը . . . : Եւ Բլօթիլտի խաւերէն գիրքը, Անթուանէթ Պրէհաթին ալ չէ՛ր կարդար խաւերէն:

Սակայն բնականութեամբ պարոնը և ճաշարանապետը տունէն մեկնեցան: Իսկոյն առաջին յարկը լուսաւորուեցաւ, մէկը պատուհաններուն քեղկերը քաշեց և վերէն վար տունը մութի մէջ թաղուեցաւ:

Հէրլօք բաւական սպասեց գիշերուան այդ պահուն, վախնալով որ Արսէն Լիւբէն իր բացակայութեանը չմեկնի: Ժամը չորսին երկու ոստիկաններ նշմարելով փողոցին ծայրը, անոնց մօտեցաւ և բացատրեց ամէն բան ու անոնց թողուց տանը հսկողութիւնը:

Ան ատենը Բէրկօլէզ փողոց, Կանիմարտի բնակարանը գնաց, և արթնցնել տուաւ: Շէրլօք Հօլմա անունը լսելով, քննիչը իսկոյն աճապարանքով վազեց: Ամէնէն մօտ ոստիկանատունը գացին կէս երկուսուսանեակ ոստիկան ժողվեցին և Արսէն Լիւբէնի գտնուած տունը եկան:

— Նոր լուր կա՛յ, հարցուց Շօլմա երկու ոստիկաններուն:

— Ոչինչ, պատասխանեցին անոնք:

Օրը կսկսէր ծայր տալ, երբ Կանիմարտ, իր կարգադրութիւնները ըրած, հնչեց դուռը և գնաց դէպի դռնապանին սենեակը: Դռնապանը իրեն ըսաւ թէ գետնայարկին վրայ վարձակալ չիկար:

(Շառուսակիթ)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ


ՀԱՆՊԵՐՁԱԲԵՆԱԹ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանաւ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նման-
օրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—19



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յաջ-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտրային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասահման	» » 12 ֆր.	» »	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՅԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասեկի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ չկը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաբութով և կամ բօսթայի փուլով 20 հաւաք
20 ղրուշի հաշուով:

1908

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

3. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՍ ԳՐԻՒՆ ՀԱՄԱՐ ՅԱՏԿԱՊԷՍ ՓՈՐԱԳՐՈՒԱԾ
300 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Անմրցելիօրէն ընտելագոյն Դասագիրք՝
Տարր. Դասընթացի երկսեռ աշակերտաց հա-
մար : Գին 5 դրուս :

Կեդրոնացեղին է հեղինակին սեպհակաց
ԳԱՐՈՒՆ ԳՐԱՏՈՒՆԸ, Կ. Պոլիս, Մեծ Նոր
խան, վերի յարկ, քիւ 55 :

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԷՍՃԵԱՆ

3 Պահէ-գաբու քիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կրը-
նաք գտնե՛լ այն ամէն չիք, տոկուն և
աժան առարկայները, որոնք Թօհա-
ֆիյէի մաս կը կազմեն : Անգամ մը այ-
ցելելը համոզում պիտի կրնայ գոյաց-
նել թէ ուրիշ ո՛ր է և տեղ չպիտի կրը-
նաք գտնե՛լ նոյնքան ճոխ մթերք մը
այդ բնառուած առթիւքօլօին վրայ :

10—3

ՓՈՐԱԳՐԻՉ

ՏԻՐԱՆ ՇԻՐԻՆԵԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի հասսէսի ձիւլալ
օղլու եօգուլը քիւ 10.

Յիշեալ Փորագրատունը եւրոպայէն բերել
տուած է մասնաւոր բարալօկներ, որոնք կը
պարունակեն գրչի կողքերու համար առ-
նուվօ ծաղկեկար շրջանակներու և տպագ-
րական զանազան տեսակ առնուվօ տառերու
օրինակներ : ԽԻՍ խնամով կը պատրաստէ
ամէն տեսակ մէտադի և Բաուշուլի վրայ
վաճառականական կնիքներ, տօսախի (չիմ-
շիր) և կալվածաօրլաթիյի վրայ ամէն տեսակ
նուրբ եւ հաւաքաւոր պատկերներ, և բժիշկ-
ներու, փաստաբաններու, վաճառականներու,
ատամնաբոյժերու և դայեակներու համար
դուռերու վրայ զետեղելիք քապկաններ :

ԱՍՈՆՑՄԷ ԶԱՏ՝ կստանձնէ նաեւ տը-
պագրական ամէն տեսակ գործեր, ինչպէս՝
նամակի անթէքներ, հասցէներ, ձեռքէ ցըր-
ուելիք ազդեր, եղիքներ, քարթ-ատրէս-
ներ, և վերջին նորաձեւութեան յարմար
այցաքարդեր, նշանախօսութեան և հարսան-
եաց հրաւիրագրեր՝ որոնց օրինակներէն ճոխ
մթերք մը կը գտնուի փորագրատան մէջ :

Դաւառներէ եկած ապսպրանքներ խիստ
խնամով կը պատրաստուին և կարելի եղա-
ծին չափ փութով իրենց հասցէին կը ղրկուին
և որոնց փոխարժէքը կանխիկ ղրկել անհը-
րաժեշտ է :

ԽԻՍ ԳՈՀԱՑՈՒՅԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ